01 նոյեմբերի 2025թ.

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Գյումրու Մուշ-2 թաղամասում <<<<Մուշ>> Զարգացման կենտրոն>> ՀԿ-ի ենթակայությամբ գործող մանկապարտեզի հաստիքների ֆինանսավորումն իրականացնելու մասին

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի <<<<Մուշ>> Զարգացման կենտրոն>> ՀԿ-ն (այսուհետ՝ <<Մուշ>>ՀԿ), ի դեմս ՀԿ-ի տնօրեն Աննա Սահակյանի, մի կողմից և Գյումրու համայնքապետարանը (այսուհետ՝համայնքապետարան), ի դեմս համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանի, մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր.

Հաշվի առնելով, որ.
ա) <<<<Մուշ>> Զարգացման կենտրոն>> ՀԿ-ն արդեն 17 տարի Մուշ-2 թաղամասում իրականացնում է նախադպրոցական չափորոշչահեն կրթական ծրագիր, որի նպատակն է ստեղծել բարենպաստ ֆիզիկական և ուսումնական պայմաններ երեխաների զարգացման և կրթման համար: Մանկապարտեզը գործունեությունն իրականացնում է իրեն անհատույց օգտագործման իրավունքով տրված 4/18 հասցեում գտնվող թիվ 23 հիմնական դպրոցի մի հատվածում;
բ) Համայնքապետարանը նույնպես ցանկանում է աջակցել Մուշ-2 թաղամասում գործող միակ մանկապարտեզի գործունեությանը;
գ) Կողմերը համաձայնության են եկել համագործակցել Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասում գործող միակ մանկապարտեզի գործունեության շարունակականությունն ապահովելու ուղղությամբ:
Կողմերը կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ Է

1.1. Սույն Հուշագրի շրջանակներում Կողմերը համաձայնվում են համագործակցել Շիրակի մարզի Գյումրու Մուշ-2 թաղամասի մանկապարտեզի գործունեության շարունակականությունն ապահովելու ուղղությամբ (այսուհետ՝ Ծրագիր):
1.2. Ծրագրի իրականացման նպատակով Գյումրու համայնքապետարանը նախատեսում է.
1.2□1. 2026թ-ին <<<<Մուշ>> Զարգացման կենտրոն>> ՀԿ-ին հատկացնել ֆինանսավորում՝ համայնքապետարանում գործող նորմերին համապատասխան 4 խմբանոց մանկապարտեզի բնականոն գործունեությունն իրականացնելու համար:

1.3. Ծրագրի իրականացման նպատակով <<Մուշ>> ՀԿ-ն պարտավորվում է.

1.3.1. Կազմակերպել 4 խմբանոց մանկապարտեզի ընթացիկ գործունեությունը՝ պահպանելով պետության կողմից սահմանված բոլոր նորմերն ու չափորոշիչները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Սույն հուշագրի շրջանակներում համայնքապետարանը պարտավորվում է.
2.1.1. Տրամադրել մանկապարտեզի հաստիքների տարեկան ֆինանսավորումը՝ համաձայն սույն պայմանագրի 1.1 կետի:
2.2. Համայնքապետարանն իրավունք ունի.
2.2.1. Իր ներկայացուցիչների միջոցով վերահսկել Ծրագրի իրականացման ողջ ընթացքը.
2.2.2. Հաշվետվություն պահանջել մյուս Կողմից ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ□

2.2.3. կողմից պահանջել կատարելու սույն հուշագրով ստանձնած իր պարտավորությունները:

2.3. Սույն հուշագրի շրջանակներում <<Մուշ>> ՀԿ-ն պարտավորվում է.

2.3.1. կազմակերպել մանկապարտեզի ընթացիկ գործունեությունը՝ պահպանելով պետության կողմից սահմանված բոլոր նորմերն ու կրթական չափորոշիչները:

2.3.2. ներկայացնել ֆինանսական և նկարագրական հաշվետվություններ մյուս Կողմին ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ:

2.3.3. Սույն հուշագրի ավարտից հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վերագրանցվել որպես ՀՈԱԿ:

2.4. <<Մուշ>> ՀԿ-ն իրավունք ունի.

2.4.1. կողմից պահանջել կատարելու սույն հուշագրով ստանձնած պարտավորությունները:

3. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

3.1. Կողմերը համաձայնվում են, որ Գյումրու Մուշ-2 թաղամասի մանկապարտեզի ֆինանսավորման փաստը պետք է հաստատվի երկկողմ ակտով, որը ստորագրում են Գյումրու համայնքապետարանի լիազոր ներկայացուցիչը և <<<<Մուշ>> զարգացման կենտրոն>> ՀԿ-ի տնօրենը:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1.Հուշագրի ժամկետը

4.1.1. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում այն երկկողմանի ստորագրելուց հետո և գործում է մինչև 2026թ. դեկտեմբերի 30-ը:

4.2. Հուշագրի վաղաժամկետ լուծումը

4.2.1. Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի կողմից, եթե մյուս կողմը չի պահպանում հուշագրի դրույթները:

4.3.Հուշագրի փոփոխություններն ու լրացումները

4.3.1.Սույն հուշագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները վավեր են, եթե դրանք կատարված են գրավոր ձևով, երկկողմանի ստորագրված և կնքված են:

4.4.Վեճերի լուծումը

4.4.1.Սույն հուշագրի հետ կապված բոլոր վեճերը Կողմերը կձգտեն լուծել բանակցությունների միջոցով կամ այլ համաձայնեցված կարգով: Կողմերի միջև համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը կլուծվեն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) դատարաններում՝ ՀՀ օրենքների համաձայն:

4.5.Հուշագրի օրինակները

Սույն հուշագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավական ուժ ունեցող երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմի համար:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐ և ԱՅԼ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Մուշ զարգացման կենտրոն ՀԿ Գյումրի, Մուշ-2 թաղամաս, ՀՎՀՀ 05535275 հ/հ 220543350023000 ԱԿԲԱ բանկ ---------- Աննա Սահակյան	Գյումրու համայնքապետարան Գյումրի, Վարդանանց հրապարակ 1 ՀՎՀՀ 05511159 Հ/հ 900215301061363 Գյումրու ՏԳԲ ---------- Ավետիս Առաքելյան